ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 137/2026-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ ԿԽ_017/26/3 ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21.10.2026թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 9-րդ կետերով, Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կանոնադրության 28-րդ կետի 7-րդ և 9-րդ ենթակետերով, «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Ակադեմիայի կառավարման խորհրդի՝ 2026 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԿԽ-017/26/1 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել Ակադեմիայի հետազոտական աշխատանքներում կամավորության հիմունքներով ներգրավվող հետազոտողների թեկնածուների ընտրության հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով՝

1) Լիանա Սերոպյան՝ Ակադեմիայի պրոռեկտոր.

2) Խաչիկ Մանուկյան՝ Ակադեմիայի ռեկտորի խորհրդական.

3) Նոննա Հարությունյան՝ Ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար:

2. Ակադեմիայի աշխատազմի ղեկավարին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն հետազոտական աշխատանքներում կամավորության հիմունքներով ներգրավվող հետազոտողների թեկնածուների ընտրության հանձնաժողովում նախարարության երկու ներկայացուցիչ ներգրավելու համար:

3. Հայտերի ուսումնասիրությունը, թեկնածուների գնահատումը և հարցազրույցների անցկացումն իրականացնել Ակադեմիայի կառավարման խորհրդի 2026 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ ԿԽ_017/26/1 որոշմամբ հաստատված կարգին համապատասխան և ընտրության արդյունքների մասին ներկայացնել Ակադեմիայի ռեկտորին:

4. Սահմանել, որ ընտրությունը թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթ չէ, իսկ ընտրված թեկնածուների հետ կնքվող կամավոր աշխատանքի մասին պայմանագրերը «Կամավոր աշխատանքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով աշխատանքային հարաբերություններ չեն առաջացնում:

5. Սահմանել, որ Հանձնաժողովի կազմի լիազորությունները դադարում են տվյալ խմբի կամավորների ներգրավման մրցույթի ավարտով՝ դրա մասին հայտարարության մեջ նշված ժամկետներում:

6. Ապահովել ընտրված թեկնածուների հետ կամավոր աշխատանքի մասին պայմանագրերի կնքումը:

7. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ինձ:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԵԿՏՈՐ **ՏԱԹԵՎԻԿ ՍՈՒՋՅԱՆ**